ՀԱՏՈՒԿ ԾՐՋԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐԵՏԻ

ԴԻՄՈՒՄԸ

Ստեփանակերտ քաղաքի եվ մարզի բնակիչներին

Հարգելի՛ ընկերներ։ Վերջին օրերին Ստեփանակերտ քաղաքում և որոշ շրջաններում նկատվում են քաղաքացիների խմբերի հակաիրավական ելույթներ։ Նրանք ձգտում են ձախողել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Լեռնային Ղարաբաղի հանձնաժողովի առաջիկա աշխատանքը, թույլ չտալ ԼՂԻՄ-ի պրոբլեմի սահմանադրական լուծումը։ Այդ նպատակով երկու կողմերի ամպատասխանատու տարրերը, այսպես կոչված, «ճանապարհային պատերազմ» են մղում, մարզի հիմնական մայրուղիներում դնելով արգելափակոցներ, վնաս պատճառելով հասարակական և երկու ազգության քաղաքացիների անձնական տրանսպորտին։ Հաճախակի են դարձել ավազակային հարձակումները զինծառայողների և միլիցիայի աշխատակիցների վրա։ Հուլիսի 10-ին ներքին գործերի 19 զինծառայողներ ստացան տարբեր ծանրության մարմնական վնասվածքներ։

Չնայած զինվորական պարետի՝ կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի դահլիճում հուլիսի 7-ին հավաքված մարզկենտրոնի ակտիվին ուղղված դիմումին, չնայած գործադուլի դադարեցման և մարզում իրադրության կայունացման ապահովման գործում իրավակարգի մարմիններին օժանդակություն ցույց տալու կոչերին, լարվածությունը աճում է։ Այս կապակցությամբ կկամենայի դիմել քաղաքի և մարզի բնակիչներին, հիշեցնելով, որ պարետային ժամը և հատուկ դրությունը առաջվա պես գործում են, և ոչ ոք չեղյալ չի հայտարարել նրանց պահանջներն ու սահմանափակումները։ Բոլորի համար պետք է պարզ լինի, որ կա օրենք, կա հրաման, և եթե մենք՝ զինվորականներս, չկատարենք դրանք, ապա դա չի լինի ոչ մարզի բնակիչների, ոչ էլ զինված ուժերի հեղինակության օգտին։ Այսօր այն անձինք, ովքեր իրենց վրա են վերցրել պարետային ժամի պայմաններում միտինգներ կազմակերպելու և վարելու իրավունքը, վտանգի են ենթարկում անմեղ մարդկանց կյանքը, բացեիբաց իրավակարգի ուժերին հրահրում ընդհարման։ Ուստի, ես դիմում եմ Ստեփանակերտ քաղաքի բնակիչների բանականությանն ու կարգապահությանը, որոնք պետք է գիտակցեն ներկա պահի ողջ բարդությունը։ Ես մեկ անգամ ևս կոչ եմ անում չենթարկվել պրովոկացիաների, կեղծ հայրենասիրության կարգախոսների։

Զորային ստորաբաժանումները, որոնց հանձնարարված է ապահովել հատուկ շրջանի իրավակարգը, իրենց տրամադրության տակ բավական ուժեր և միջոցներ ունեն, որպեսզի կասեցնեն Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծման և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ ԼՂԻՄ-ի հանձնաժողովի աշխատանքի ձախողմանն ուղղված ամեն մի պրովոկացիոն գործողություն և մասսայական անկարգություններ։

Հատուկ շրջանի զինվորական պարետ գնդապետ

ՄՈՒՍԱՏՈՎ

11 հուլիսի 1989 թ.